

ԱՆՑԵԱԼՔ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԱԴ:

Օգոստոս 7.ին, կիոլովողակում, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, վախճանել է նշանաւոր զրող Ալեքսանդր Շիրվանզադէն։ Դիակը սաւառնակով փոխադրւել է Երեւան եւ յանձնել հողին մեծ հանդիսաւորութեամբ։

Շիրվանզադէի մահով անհետանում է վերջին կէս զարու հայ կեանքի ամենաականաւոր դէմքերից մէկը։ Մէկը, որ այնպայման որոշ հետք պիտի թողնէ հայոց զբականութեան պատմութեան մէջ։ Շիրվանզադէի անունը կապւած կը մնայ մեր զբականութեան իսաւոպաշտ ուղղութեան հետ։

Շիրվանզադէի իսկական անունը Ալեքսանդր Մովսիսեան էր։ Ծնւել էր 1858 թ., Շամախի քաղաքում։ Նախնական կրթութիւնը ստացել էր քաղաքային, ապա ծխական զպրոցներում եւ 1873 թ. աւարտել գաւառական զպրոցը։ 1875 թ. տեղափոխվելով Բագու՝ սկաշտօնավարել էր նահանգային վարչութեան մէջ իրրեւ գրագիր, ապա, որպէս հաշւատար, մի առեւտրական տան մէջ, յետոյ նշանակւել էր զբաղարպանապետ Մարգարիտական Բնկերութեան Գրադարանում։ 1878 թւից սկսել էր աշխատակցել «Բակինսկի իդվեստիա» եւ «Թիֆլիսկի Վեստնիկ» ոռուերէն, ապա «Մեղու» եւ «Մրշակ» հայերէն թերթերին։ Իր յօդւածների նիւթն էր կազմում, մեծ մասամբ, Բագուի հայ կեսնքի չարն ու բարին, կամ նաւթահանքերի բանորների չարքաշ վիճակը։ Նրա առաջին զբական երկը, որ իր վրա հրատիրեց ընթերցողների ուշադրութիւնը, «Հրդեհ Նաւթահանքերում»-ն էր, որ տպեց «Մշակ»-ում, 1883 թ.։ Արան յաջորդեց «Փորձակատարի Թիշտակարանը», նոյնպէս «Մշակ»-ում։ Այս երկու գործերը Շիրվանզադէին ապահովեցին զբական անուն եւ ընդմիշտ կապեցին հայոց զբականութեան հետ։

1883 թ. Շիրվանզադէն տեղափոխւեց Թիֆլիս՝ արեւելահայոց մտաւոր կեանքի կենտրոնը եւ իբրեւ Գր. Արծրունու գաղափարական հետեւողներից մէկը՝ մտաւ «Մշակ»-ի շրջանակը։ Այսուղ իրար յետեւից նրա զրչի տակից դուրս եկան «Արամբին», «Զուր Յոյսեր»,

«Խնամատար», «Նամուս», «Յաւազարը», և «Արսէն Դիմաքսեան» վէտերը: 1898 թ., իրեւ հնչակեան նու մի տարով աքսորւեց Օդէսա եւ վերագառնալով՝ շարունակեց գրական աշխատանքը: Այս շրջանում լրյա տեսան նրա «Մելանիա», «Ռնէր իրաւունք», «Եւգինէ», «Պատուի համար» թատերգութիւնները, «Արտիստը» պատմածքը և «Բառո» գլուխ գործոց վէտը:

1905-10 թւականներին Շիրվանղադէն անցկացրեց արտասահմանում, Փարիզ, որտեղից աշխատակցում էր Թիֆլիսի «Հորիզոն» թերթին: Նրա այս շրջանի դրաւածքներից են «Կործանւածը», «Արմենուհին» և «Աւերակների վրա» թատերգութիւնները, ինչպէս և բազմաթիւ յօդւածներ նւիրւած գրականութեան և արւեստի խնդիրներին:

Փարիզից վերադառնալուց յետոյ, նու շարունակեց մօտիկ աշխատակցութիւնը «Հորիզոն» թերթին: Վերջինիս նախաձեռնութեամբ, 1911-ին, տօնւեց նրա գրական երեսնամեայ դործունէութեան յորելեանը, որ բացի բարոյական կաղմից՝ ասկահովեց նրան նաեւ ուրոշ նիւթական միջոց: Պատերազմի ընթացքին, 1917-ին, «Գործ»-ում լրյա տեսաւ նրա «Արհամիքի Օրերին» հինգ արարւածով գրաման, որ մի արձագանդ էր օրւայ դէպքերին:

1919-ին, վախենալով բոլշևիկեան յեղաշրջումների հետեւանքով առաջ եկած խառնակութիւններից, Շիրվանղադէն անցաւ Պոլիս, ուր բաւական ժամանակ ապրելուց յետոյ, ճանապարհորդեց արտասահմանի հայարնակ վայրերը մինչեւ Ամերիկա: Միեւնոյն ժամանակ աշխատակցում էր գաճնակցական մամուլին: Յատկապէս «Հայրենիք» ամսագրում հրատարակեց բազմաթիւ յօդւածներ, մասնամբ, յուշագրութիւններ, որոնք հետագային մաս կազմեցին երեւանում առանձին հատորներով լրյա տեսած իր յուշերի:

Ամերիկայից վերադառնալով՝ Շիրվանղադէն մի քանի տարի ապրեց Փարիզում, Հայ հարուստների նիւթական աջակցութեամբ: Զկարողանալով, սակայն, տոկալ կեանքի ծանր պարմաններին, վերադարձաւ Հայաստան, ուր 1930-ին տօնւեց նրա գրական դործունէութեան յիսնամեակը: Երեւանում նա գրեց ևր բեմադրոց «Մորդանի Խնամին» թատերգութիւնը, որ մի տգեղ պարսաւագիր էր այն անձանց դէմ, որոնց նպաստով իր գոյութիւնն էր պահել արտասահմանում:

Շիրվանղադէի կեանքը Հայաստանում արձանագրելիք լուսաւորում է կէտ չունի իր մէջ: Նա եղաւ անզուսապ քծնողն ու ջատագովը ոչ մի կէտ չունի իր մէջ: Աս եղաւ անզուսապ քծնողն ու ջատագովը ոչ մի կէտ չունի իր մէջ: Ասենք Հասարակական նկարագրի ու խորհրդային կառավարութեան: Ասենք Հասարակական նկարագրի ու բարոյականութեան տեսակէտից Շիրվանղադէն առաջ էլ առանձին

բարձրութեան վրա կեցած չէր. համոզում եւ ուղղութիւն փոխելը նրա կեանքում սովորական բաներ էին: Մոլեուանդ մշակական՝ նա չվարանեց անցնել հակառակորդ «Արձագանք»-ի կողմը, երբ դրա մէջ որոշ շահ տեսաւ: Հակադաշնակցական՝ նա դիւրութեամբ փոխադրւեց դաշնակցական «Հորիզոն»-ի տունը, երբ համոզեց, թէ այդպէս իրեն համար աւելի լաւ կը լինի: Ազգային Բիւրօի, ապա Ազգային Խորհրդի գործակից՝ նա չվարանեց նրանց վրա ցնիս նետել, երբ հետազային այդ շահաւոր երեւաց: Արտասահմանի գաշնակցական մամուլի աշխատակից, եւ «Հայրենիք»-ի վարձատրութեամբ ազգով՝ նա ոչ մի գիւտառութիւն չկրեց դուրս դալու. Դաշնակցութեան դէմ, երբ այդ անհրաժեշտ էր Ազգային Պատուիրակութիւնից կամ Բարեործականի շրջանակից նպաստաւորւելու եւ կամ խորհրդային իշխանութեան գութը հայցելու համար:

Նկարագրի այս թերութիւնները, սակայն, արգելք չեն, որ մենք ճանաչենք Շիրվանզադէի գրական մեծ արժեքը թէ որպէս վիպասան եւ թէ իրեւ թատերագիր: Այս երկու ասպարէզներում էլ նա մեծարժեք եւ մնայուն գործեր է տեւել: Եթէ իր թատերական երկերով Շիրվանզադէն մի տեսակ շարունակողը եղաւ Գ. Սունդուկեանի եւ սրանից առաջ եղած իրապաշտների, որպէս վիպագիր ըստ արժանւոյն, նրան են համարում հիմնադիրը հայ իրապաշտ վիպագրութեան: Շիրվանզադէն իր ստեղծագործութեամբ շեշտած հակադրութիւն է մի ժամանակ մեզ մօտ բաւական ընդունւած ոռմանտիզմի ու խորհրդապաշտութեան: Շիրվանզադէն մեր գրականութեան մէջ անմահացըք մի ամբողջ դարաշրջան:

Շիրվանզադէի անունը անխողելի կապերով կապւած է արեւելահայ քաղքենի դասի եւ, յատկապէս, Բագուի հայ քաղքենիութեան ծագման եւ զարդացման պատմութեան հետ: Դրամագլխի կուտակման նախնական շրջանն ապրող հայ քաղքենի դասակարգի կենցաղն ու բարքերը, զաղափարներն ու տենչերը նրա երկերում արձանագըրւծ են գեղարեւստական այնպիսի գունագեղութեամբ, այնպիսի ճոխութեամբ ու հարզադատութեամբ, որ ամենայն իրաւամբ նրա վեպերը կարելի է համարել մարդկային խօսուն վաւերագրեր անցեալ դարավերջի հայ ընկերային պատմութեան պատկերացման համար: Շիրվանզադէն հայ քաղքենիութեան պատմագիրն է:

Արեւստի տեսակէտից էլ Շիրվանզադէի երկերը հարուստ են կատարեալ էջերով: Նաւթահանքի հրդեհի տեսարանը, օրինակ, «Քառոս»-ում: Կամ, «Պատուի համար»-ը իր ամբողջութեան մէջ: Կամ բաղմաթիւ նկարագրական ու հոգեբանական հատածներ այս ու այն վէպում:

Շիրվանղագէի լեզուն ճռիս չէ . նրա հայերէնը յաճախ կաղում է : Ոճը հատու է ու պատկերալից : Կենդանի ու զուսպ հեղնանքը առանձին աշխոյժ ու գրաւչութիւն են տալիս նրա գրւածքներին : Ռւժեղ է նրա երկախօսութիւնը : Նրա պատկերները գծւած են վարպետի լայն վրձինով , դոյների բազմազանութեամբ : Երկերի նիւթի ու դաղախալները մարդկային են , յառաջաղիմութեան աղբերից առնըւած , յաճախ , տիպական ու մնայուն :

Թէ որպէս արւեստագէտ եւ թէ իրրեւ ընկերային միջավայրը պատկերացնող , Շիրվանղագէն կը մնայ հայոց զրականութեան ամենաաչքի ընկնող դէմքերից մէկը , Սունդուկեանի ու Նար-Դոսի կողքին :

Ա . Վ .

ՓՐՕՖ . Ա . ՍՈՂԻԿԵԱՆ

Մայիս 28-ին , Հիւս . Ամերիկայի Բոչչութը քաղաքում , 83 տարեկանհասակում , վախճանել է Կարնի Սանասարեան դպրոցի հիմնադիր ու դեկադար երրորդութեան վերջին անդամը՝ Փրօֆ . Սարդուղիս Սողիկեանը : Հանգուցեալը Խարբերդցի էր : Ծնւած պէտք է լինի 1852-53 թւականներին : Նախնական կրթութիւնը ստանալով իր ծննդավայրում՝ պատահի հասակում , իրրեւ Մկրտիչ Սանասարեանի սաներից մէկը , ուղարկել էր Գերմանիա ուսումը կատարելազործելու համար :

Տասը տարի Գերմանիայում սովորելուց յետոյ , Սողիկեանը վերադարձաւ Թիւրքիա եւ Յ . Մատաթեանի ու Գ . Աբուլեանի հետ մասնակցեց Սանասարեան վարժարանի հիմնադրութեան եւ այնուշետեւ չուրջ 40 տարի ծառայեց այդ հաստատութեան , որպէս ուսուցիչ եւ դաստիարակ : Իր մասնագիտութիւնն էր՝ կրօն , լեզուներ , արւեստ : Բնաւորութեամբ մեղմ , դիւրահաղորդ , լայնօրէն զարդարած՝ Սողիկեանը ջերմօրէն սիրած էր թէ իր սաների , թէ պաշտօնակիցների , թէ դրսի հասարակութեան եւ թէ կառավարական շըրջանների կողմից : Սանասարեան դպրոցը իր յաջողութիւնների համար շատ բանով պարտական էր նրան :

1915-ի եղեռնից փրօֆ . Սողիկեանը աղատւեց հրաշքով - չնորհիւ գերման հիւպատոսի հետ ունեցած անձնական կապերի : Նոյն հիւպատոսի միջոցով աղատւեց եւ ուրիշ հայերի կեանքեր : Պատերազմից յետոյ գաղթեց Ամերիկա , ուր եւ վերջացրեց իր արդիւնաւոր կեանքը :

